«ՆԻՆԳՅՈ. ճապոնական տիկնիկների արվեստն ու գեղեցկությունը» ճանապարհորդող ցուցահանդեսը տեղի կունենա հուլիսի 7-ից 27-ը

Ճապոնիա հիմնադրամի «ՆԻՆԳՅՈ. ճապոնական տիկնիկների արվեստն ու գեղեցկությունը» ճանապարհորդող ցուցահանդեսը տեղի կունենա 2023 թվականի հուլիսի 7-ից (ուրբաթ) մինչև հուլիսի 27-ը (հինգշաբթի) Երևանի պետական տիկնիկային թատրոնում:

«Նինգյո» խորագրի ներքո, որը ճապոներենից թարգմանաբար նշանակում է «տիկնիկ» կամ «մարդու կերպարանք», ցուցահանդեսում ներկայացված են ճապոնական տարբեր տիկնիկներ, որոնք արտացոլում են Ճապոնիայի պատմության ընթացքում մշակված տարբեր մշակութային ասպեկտներ:

Ցուցահանդեսի առաջին բաժնում ներկայացված է ճապոնական տիկնիկների ստեղծումը, որոնք ծագել են ծեսերից և աղոթքներից՝ նվիրված երեխաների առողջ աճին: Երկրորդ բաժինը «Տիկնիկը որպես կերպարվեստ» խորագրի ներքո է և ներկայացնում է արհեստավորների հիասքանչ տեխնիկայով ստեղծված տիկնիկներ, իսկ երրորդ բաժինը, որը կոչվում է «Տիկնիկը որպես ժողովրդական արվեստ», ներկայացնում է պարզ նյութերից պատրաստված տարատեսակ տիկնիկներ: Վերջապես, չորրորդ և վերջին բաժինը կենտրոնանում է ճապոնական տիկնիկների մշակույթի տարածման վրա մինչև մեր օրերը:

Ժամանակահատվածը՝ 2023 թվականի հուլիսի 7-ից 27-ը
Վայրը՝ Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն
Հասցե՝ Երևան, Սայաթ-Նովա 4
Ժամեր՝ 10:00-18:00 ամեն օր (առանց հանգստյան օրերի)

Կազմակերպիչ՝ Հայաստանում Ճապոնիայի դեսպանություն
Համակազմակերպիչներ՝ Ճապոնիա հիմնադրամ, Երևանի պետական տիկնիկային թատրոն, «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթամշակութային կենտրոն
Անվանական աջակցություն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Խնդրում ենք կիսվել ցուցահանդեսից ստացած տպավորություններով այստեղ: